ԻՆՉ ՍՏԱՅՈՒԵՑ

Մեծ Ցորէլեանի օրերն այնպէս եկան ու այնպէս անցան, որ կարծես այն սովորական բարիկենդանի օրեր էին, եկան առիթ տուին ուտելու, խմելու, մուխամբաղ ու շարական երգելու և լաւ ուրախ դինոլցած՝ տները ցրուելու։

Այսօր երբ համարեա մոռացութեան գետի ափին են հասել այդ տօնի շուրջը բարձրացած բարբանջանքները, երբ լռել են հակահաւատութիւններն ու վիճաբանութիւնները, երբ դադարել են մարքի ու խօսքի ալէկոծութիւնները ու երբ հանդարտ սրտով կարող ես շոշափել այդ կռիւների ու ազմուկների արդիւնքը, կարող ես քրքրել պատմական տօնի առիթով կազմուած հանդէսների հաշիւը, ի՞նչ կստացուի, ի՞նչ մի արդիւնաւոր պտուղ։ Զէ՞ որ ոչինչ, ոչինչ և ոչինչ։

Բայց չէ՞ որ ուղղափառները մի առանձին ապլոմբով, մի առանձին ինքնահաւատութեամբ հանդէս եկան, իրանց ձեռքն առան ուրիշի գահն ու գաւազանը և իրանք կամեցան պատմական տօնը շքաւոր էջերով նկարագրել հայոց գրի և հայոց տպագրութեան պատմութեան հատորներում։ Ապա այսօր, երբ միայն երկնէր երկիր և երկրին ու լեառն ծնաւ մուկն չնչէին, ի՞նչ պիտի գրեն, ի՞նչ խօսքերով պիտի մեծարեն այդ տօնի անուան կազմած խնջոյքները։ Ո՞չ, արդեօք, միայն կերանք, խմեցինք, երգ երգեցինք, մեծաշուք հանդէսներով վեղարներին տաճար իջեցրինք, ապա վեհարան բարձրացրինք, թմբուկ հարեցինք և դնացինք տուն։

Գրականների ձեռից խլուեց սեպհականութիւնը, մի սին փառք վաստակելու համար՝ այդ սեպհականութիւնը յապօրինիս փաթաթուեց դպրոցի շլինքին։

Բայց ի՞նչ ստացուեց։

Զէ՞ որ այսօր դպրոցն՝ էլի բանաստեղծի մշակի նման մնացել է շլինքն արևառ, քրտինքն երեսին, ու ոչ-ոք չկայ որ այդ քրտինքը սրբէ, որ արևառ շլինքին զովութիւն տայ, որ Մեծ Ցորէլեանի յիշատակն այսքան ախուր, այսքան անդոյն չմնար։

Վա՛յ այն տանը, որի տէրերը մնացել են լալկաններն ու դուժկանները։

Վա՛յ այն դպրոցին, որի բարգաւաճման նախանձախնդիրները մնացել են փաստաբան դահրաշիները— այն էլ մէկը Դօնի, միւսը Կուբանի զաղախների տներում։

Քրքրում ես Հայկական ազգի պատմութիւնը, պրպտում ես նրա դրագարանները, շրջում ես գիւղ, քաղաք ու աւան, աչքով տեսնում ես հայի տունը, հայի օջախը, հայութեան մարմնին ծանրացած կոշտերը, ապա ականջով լսում ես հայի մրմունջը, հայի կականը, նրա դանդատն ու աղերսը և ձեռով շոշափում նրա վէրքն ու պպարը և մնում ես սարսափով, երբ այս երկրի ու այս ժողովրդի ցաւատարները կղերի ու բուրժուաների հետ ձեռք ձեռքի են առել մինչև անգամ դոնսկոյ ու կուբանսկիյ փաստաբանները, որոնցից մէկը դօն-քիշոտութիւնը հասցնում է մինչ այն աստիճան, որ Կուբան գետի ափին, զաղախի կողքին նստած՝ դոռում է ամբողջ հայ ազգի հասցէին, ասելով. մեզանից փող մի ուզէք, մեզանից ձեռք վերցրէք և այլն։

Դօն-Քիշոտներ ու Սանխօ-Պանչոներ ամեն ազգի մէջ կան, բայց այդ աստիճան մոլեգին, ինչպէս անբախտ Հայկական ազգի տանն է, մի այլ տեղ դժուար է երևակայել։

Սակայն խնդիրն այդ Դօն-Քիշոտների մէջ չէ, թող դրանք որքան ուզեն թռչոտան, դրանք շատ չնչին բաներ են, անարժան որևէ ուշադրութեան, այսուամենայնիւ դրանք են, որ ապացուցանում են թէ համազգային Մեծ Ցորէլեանին ինչպէս ոչնչացրին, ինչպէս սեւացրին նրա գոյնը, նրա պատկերը, նրա իսկական շուքը։

Խեղդեցին, գրականների իրաւունքը դրին գրուանի տակ, հրապարակ հանեցին դպրոցական ֆոնդի խնդիրը և ահա այդ օրից շատ ժամանակ է անցել.

ինչ է սատացուել և ինչ բանի համար են յոյս դնում։

Կոտրածն էլ չի սազանալ, այն միայն կարելի է կոծկել, բայց կոծկած ամանը չէ՞որ ամօթ է հանդէս հանել։

Բայց եթէ այսօր քար սեղմենք մեր կրծքերին և և այդ մի ծանր ուղուրպացիայի ծանրագոյն հարուածին էլ դիմանանք, դոնէ այսուհետև մեր խնամակալներն ուշքի կգան և կհասկանան, որ փառք ստանալու համար շատ տգեղ է դաբսուղի ճանապարհներով ընթանալը, որ պէտք է այնպէս գործել, որպէսզի փառքը ինքը որոնէ իրանց։

Մեծ Ցոբէլեանի աչքերը նրանք չէին, որ հանդիսապետներ հանդիսացան, նրանք օտար էին, մինչև իսկ խորթ էին այդ Ցոբէլեանի համար։

Այդ է պատճառը, որ նրանց շնորհիւ սարդած գործը—դպրոցական ֆոնդը մնաց բարուրանքի մէջ փաթաթուած և ճռճռան խնջոյքներից ու խրախճանքներից օչինչ չսատացուեց։

Բայց, արդեօք, դոնէ այս դասը, որի նման այլևս մեծ, այլև՝ խորիմաստ դաս դժուար է տեսնել, խրատական կլինի մեր արժանապատիւ ուղուրպատորների համար։ Գոնէ այսուհետև նրանք կհասկանան, որ ազգը չէ, այլ իրանք և ամենքս ենք ազգի համար։

Ա. ՆԵՏԵԱՆ